ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

« » _____ 2020թ. ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: _____ հեռ. (0312) 3-26-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Ա. ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆԻՆ

Հարգելի պարոն նախարար

Հայտնում ենք, որ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Հայնան նահանգից «Չին-հայկական հարաբերությունների զարգացման հիմնադրամ»-ի միջոցով ՀՀ Շիրակի մարզին, որպես անհատույց օգնություն հատկացվել է 9600 հատ վիրաբուժական դիմակ, որի ՀՀ տարածք ներմուծման համար անհրաժեշտ է վճարել 300,0 հազ.դրամ ավելացված արժեքի հարկ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման N 12 հավելվածի 5-րդ կետով՝ ներկայացնում ենք վերը նշված որոշման N 4 հավելվածով նախատեսված «1039. ՀՀ Շիրակի մարզում տարածքային պետական կառավարում» ծրագրի «11001. ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից տարածքային պետական կառավարման ապահովում» միջոցառման տնտեսագիտական դասակարգման «4214.Կապի ծառայություններ» և «4822. Այլ հարկեր» հոդվածների միջև վերաբաշխում կատարելու մասին ծանուցումը:

Միաժամանակ կից ներկայացնում ենք ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 4-ի N 465-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող առանձին տեսակի ապրանքների նպատակային նշանակությունը հաստատելու վերաբերյալ» եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

X

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Լ. Մարտիրոսյան
Դ. Վարդանյան
*հեռ. /0312/ 49000*129*